ՄԱՀԳՈՅԺ

ՄԱԿԱՐ ԵՔՄԱԼԵԱՆ

Մարտի 6-ին Թիֆլիսի Հաւլաբար թաղում երկարատեւ և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանուեց երաժշտագէտ Մակար Եքմալեանը 50 տարեկան հասակում։

Թէ ո՞վ էր Եքմալեանը և ինչո՞վ էր նա յայտնի հայ հասարակութեան՝ մենք երկար կանգ չենք առնում այդ խնդիրների վերայ. այդ կարելի է բացատրել միայն մի քանի խօսքով.—Մակար Եքմալեանը հիմնադիրն ու տարածողն էր Հայոց եկեղեցական քառաձայն երգեցողութեան. նա առաջինը ներդաշնակեց և մտցրեց Ռուսիայի հայ եկեղեցիներում չորս ձայնով երգելը, որը միաժամանակ աւանդելով Ներսիսեան Հայոց դպրոցում, կազմեց 80 հոգուց բաղկացած մի անօրինակ երգեցիկ խումբ, որ երգում էր Վանքի Մայր եկեղեցում և գրաւում դէպի ինքը անթիւ հայ ժողովուրդ և բազմաթիւ օտարազգի այցելուներ, զարթեցնելով նոցա մէջ հիացում և գեղարուեստական հետաքրքրութիւն։ Նորա աշակերտները տարիների ընթացքում ցրուելով գաւառները տարածեցին ամենուրեք Եքմալեանի ներդաշնական երգեցողութիւնը, կազմեցին քառաձայն խմբեր և այժմ չկայ մի փոքր ի շատէ յայտնի կենտրոն, ուր երգելիս չլինի այդ շկօլայով պատրաստած լաւ թէ վատ մի խումբ։

Կարող ենք ասել, որ Եքմալեանը եղել է ռուսահայ ժողովրդի բարեպաշտական զգացման ջերմ արծարծողը դէպի հայրենի եկեղեցին, ապա ուրեմն և մեծ է նորա կատարած գործը և գնահատութեան արժանի։ Եւ նորան թաղեցին չտեսնուած մի հանդէսով։

Բայց կարդացէ՞ք Դուք «Մշակ»ում պ. Յ. Ս.-ի և «Տարազում» Մելիք Ադամեանի նամակները։ Ժողովուրդն իմացա՞ւ թէ ինչ տանջանալից կեանք է վարել Եքմալեանը իւր կենդանութեան ժամանակ։ Նորան հալածել են, տարիներ շարունակ հալածել իւր արդիւնաւէտ ուսուցչութեան ժամանակ, խզել են ամեն յարաբերութիւն նորա հետ, ստիպել տարիներով դասամիջոցներին ուսուցչանոց չմտնել, այլ տանջուել զանազան նախասենեակներում և ծառաների սենեակում. և այս ամենը ինչ որ երեւակայական յանցանքների համար։ Սակայն բաւ է մեզ երկարել այս մասին, թող խօսեն երկարամեայ բանդէտ քարտուղարը և պաշտօնական անթիւ գրագրութիւնները։

Եքմալեանը խելագարուեց հէնց դասի ժամանակ։

Հանգիստ քո հալածուած անձի աճիւնին, երջանիկ հոգի, քո յիշատակը կմնայ, մինչև որ կանգուն կայ Հայ եկեղեցին. ուրեմն յաւիտեան։

ՀԱՑ

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Նորերս Բօլղարիայի Սոֆիա քաղաքի շրջակայքում մեռաւ մեր երիտասարդ շրջաններում յայտնի Քրիստափոր Միքայէլեանը։ Հանգուցեալը ագուլեցի էր, աւարտել էր Թիֆլիսի ուսուցչական դպրոցը, յետոյ, մի առ ժամանակ Մոսկվայում շարունակելով ուսումը, վերադարձել էր Կովկաս և ուսուցչու-